ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով
Մասնակից՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Հակոբյանի, Մ. Աղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցում, օդորակիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.01.2020թ. թիվ 1.4/382-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 24.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2020թ.-ին:

2. ՀՀ Ազգային ժողովի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովը, 22.01.2020թ.-ին թիվ 1.4/382-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊ, «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊ և «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունները:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 18-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է, «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով ծանուցվել է շտկելու 1.1 Հավելվածով սահմանված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2 Արձանագրության (կցվում է) 10-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.01.2019թ.-ին գրությամբ դիմել է «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի հունվարի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարության ՍՅ-ԼՕ-2020/14 գրությամբ նախաձեռնել է ընթացակարգ <<ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին մասնակցել ենք ՀՀ ազգային ժողովի կողմից կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով գնանշման հարցմանը, այնուհետև 10.12.2019թ. մեզ ծանուցել են, որ հայտում բացակայում է 1.1 հավելվածը և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում hermineh@parliament.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերով նախատեսված շտկված փաստաթղթերը, ինչի մեր կողմից կատարվել է՝ սահմանված ժամկետում:

Armeps համակարգի Հայտեր բաժնի միջոցով հետևել եմ ներկայացված գնառաջարկներին և համեմատելով դրանք պարզ դարձավ, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղում մեր ընկերությունն է, որից հետո սպասել եմ ծանուցման, կամ արձանագրության հրապարակմանը, որը այդպես էլ տեղի չունեցավ մինչև 14.01.2020թ., որից պարզ դարձավ, որ հանձնաժողովը բավարար է գնահատել մեր ներկայացրած տեխնիկական բնութագիրը և ընտրված մասնակից է ճանաչել մեր ընկերությանը, այնուհետև <<ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ>> ՍՊԸ-ն 16.12.2019թ.-ին ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով պնդել է, որ <<ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի և <<Տուն կոմպլեքս>> ՍՊԸ-ի հայտերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին, ինչի հիման վրա 26.12.2019թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշումով մեր ընկերության հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնահատել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, ինչի արդյունքում մեր հանդեպ հարուցվել է սույն ընթացակարգը:

Հարգելի պարոն Օհանյան, վերոգրյալից պարզ է դառնում, որ մեր ընկերությունը չի իմացել տեղի ունեցող գործընթացների մասին, այլ միայն 14.01.2020թ.-ին gnumner.am կայքում հրապարակված արձանագրությունից ենք իմանում տեղի ունեցածի վերաբերյալ, երբ որ արդեն չեինք կարող մասնակցել նիստերին և ներկայացնել մեր փաստարկները, թե ինչու էր հնարավոր մեր հայտը ճանաչել բավարար, քանի-որ բողոքներ քննող անձը ըստ էության չհանդիսանալով մասնագետ՝ օդորակիչների ոլորտում, չի կարող գնահատել

դրանք համարժեք էին այն գնման պահանջներին, որոնք պահանջել էր պատվիրատուն, իսկ եթե հանձնաժողովը ժամանակին ծանուցեր մեզ, կամ տեղադրեր արձանագրությունը մենք կարող էինք պաշտպանել մեր շահերը և ներկայումս ոչ միայն չէինք հայտնվի սև ցուցակում ընդգրկվելու վտանգի առաջ, այլ նաև չէինք զրկվի 2 398 800 /երկու միլիոն երեք հարյուր ինսունութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամի օդորակիչների մատակարարման իրավունքից, ուստի գտնում ենք, որ հանձնաժողովի կողմից խախտվել է նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակելու կարգը՝ համաձայն գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, սակայն երբ տեղեկագրում՝ gnumner.am, կայքում փնտրում ենք այդ արձանագրությունները, ապա տեսնում ենք որ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով 6 դեկտեմբեր 2019թ N 2 արձանագրությունը տեղեկագրում հրապարակված է 14.01.2020թ.-ին, դեռ ավելին այս արձանագրության մեջ զետեղված է բոլոր գործողությունները, որը կատարվել է այդ ընթացքում, այն ինչ դրանք պետք է առանձին արձանագրության տեսքով լիներին և հրապարակվեին օրենքի համապատասխան՝ սա այն դեպքում, որ մեզ համար սա փաստացի միակ հնարավոր եղանակն էր, որպեսզի մենք տեղեկանաինք, որ մեր հայտը մերժվել է, իսկ արձանագրությունները ժամանակին տեղադրվելու դեպքում, երբ որ կիմանաինք, որ մեզ մերժել են և որը պետք է հիմք տար բողոքարկոլու այդ որոշումը և մի գուցե այս գործը այլ ընթացք կստանար:

Հարգելի պարոն Օհանյան, <<ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ն՝ 2018թ.-ից մասնակցում է պետության կարիքների համար գնվող ապրանքների և ծառայությունների գնման գործընթացներին, այս ժամանակահատվածում մեր ընկերության կողմից մատակարարվել են մի քնի միլիոն ՀՀ դրամի ապրանքներ և ծառայություններ և չի եղել մի դեպք, որ մեր հետ պայմանագիր խզվի, կամ նման գործընթաց նախաձեռնվի, այսինքն բոլոր փուլերը հետևողական և բարեխիղճ կատարվել է մեր կողմից, ինչը կարող եք ստուգել հենց gnumner.am, armeps.am համակարգերի միջոցով, իսկ այս ընթացակարգը ըստ էության քննում է մասնակցի՝ այսինքն մեր վարքագիծը կոնկրետ գնման գործընթացի մասով, որտեղ մեր կողմից ևս թույլ չի տրվել գնումների մասին օրենքով նախատեսված ընթացակարգերի խախտում, այլ հանձնաժողովի կողմից ընթացակարգի խախտման հետևանքով, երբ ժամանակին չի հրապարակվել արձանագրությունները, որից մենք կարող էինք իմանալ, որ կոնկրետ մեր ներկայացրված տեխնիկական բնութագիրն է բողոքի առարկա, ապա մենք կներգրավվեինք տվյալ բողոքի քննությանը և կներկայացնեինք փաստական հանգամանքներ, որ կոնկրետ մեր ներկայացրված պարամետրերը

համապատասխանում են հրավերի պահանջներին և դրանից հետո եթե չեր ընդունվի մեր փաստարկները կդիմեինք դատարան, սակայն հիմա մեզ փաստի առաջ են կանգնեցրել, երբ, որ մենք ստիպված ենք միջոցներ ծեռնարկելու, որպեսզի չհայտնվենք սև ցուցակում, եթե սույն ընթացակարգի բողոք քննող անձին հետաքրքրի մենք կարող ենք նաև սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացնել փաստեր, որ մեր ներկայացրած պարամետրերը համապատասխանում են ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով գնման պահանջներին, ինչով կհիմնավորվի, որ մեր ընկերության հայտը ենթակա չէր մերժման, բայց հասկանալով նաև, որ սա այլ ընթացակարգ է, ուստի խնդրում ենք ուշադրություն դարձնել մեր կողնից վերևում մատնանշված հանձնաժողովի բացթողումներին, որոնք չլինելու դեպքում մենք չեինք զրկվի մրցակցային պայմաններում մեր իրավացիությունը ապացուցելու հնարավորությունից և դեռ ավելին 2 /երկու/ տարի զրկվելով փաստացի մեր միակ ապրուստի միջոցից և ստացվում է, որ մեր ընկերությունը կարող է ենթարկվել պատասխանատվության, մեղսագրվող արարքի մեջ չունենալով մեղք, ուստի գտնում ենք, որ նման դեպքում անթույլատրելի է որպեսզի <<ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ն ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, խնդրում եմ Ձեզ.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ՝ 23.01.2020թ. ՍՅ-ԼՕ-2020/14 ծածկագրով՝ <<ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:»:

4. <u>ՍՅ-ԼՕ-2020/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար 29.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վիէլվի Սենթր», «Տուն Կոմպլեքս» և «էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊ ընկերությունները:

«էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել

է, որ բավարարում է «ՀՀ Աժ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին, «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին և «Վիէլվի Սենթր» ՍՊԸ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել hermineh@parliament.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Նիստը վերսկսվել է 12.12.2019թ.-ին ժամը 12:00-ին: Մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

«Վիէլվի Սենթր» ՍՊԸ-ի կողմից 16.12.2019թ.-ին ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով բողոքաբերը հայտնել է, որ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի, «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար 29.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀ Աժ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելով և ներկայացնելով hermineh@parliament.am էլեկտրոնային փոստի հասցեին, հայտը գնահատվել է բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժվել:

Օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմանը և փաստել հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ... գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ նորմների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/14 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ